

ՀՈՒՆԱՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ,
ԲՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՆԵ-ԷՌԵՆԱ ՇԻՐԻՆՅԱՆ, ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

«Կանոնագիրք Հայոց»-ի մանրակրկիտ բնագրագիտական վերլուծության արդյունքում¹ բացահայտվել են Հայերեն թարգմանության հետաքրքիր ընդհանրություններ հունարեն որոշ ձեռագրերի հետ, հետևաբար բազմատույն արդյունքների զգալի մասը կարող է օգտագործվել հունարեն կանոնների քննական հրատարակությունը պատրաստելիս²:

Հունարեն սկզբնագրի և Հայերեն թարգմանության բաղադրատույնը երբեմն թույլ է տալիս նաև ճշգրտել մեր պատկերացումները վերջինիս նախնական, չխմբագրված տարբերակի մասին, մի քանի տարրերից ուղղորդելով ընտրել ճիշտը կամ էլ պարզապես ուղղումներ մտցնել բնագրի մեջ: Այդ նյութի համեմատաբար սահմանափակ ծավալն ու Հայագիտական հետաքրքրությունը հաշվի առնելով՝ այն ներկայացնում ենք ստորև:

ա. Հայկական «Կանոնագիրք» կազմել է Հովհան Օձնեցի կաթողիկոսը (717-728): Այն բաղկացած է քսանչորս կանոնախմբից, որոնց մոտ կեսը թարգմանական են, իսկ կեսը՝ Հայկական իրականության ծնունդ (ազգային ժողովների ընդունած և անհատ հեղինակությունների անունով

¹ Սույն հոդվածի նյութը քաղված է «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի մաս կազմող, հունարենից թարգմանված կանոնների՝ հունարեն նախորինակների հետ բաղադրատույնը նվիրված անգլերեն մենագրությունից, որը լույս է տեսնելու առաջիկայում Մայնի Ֆրանկֆուրտում: Կանոնական ժողովածուի կազմավորման պատմությանը և Հայ մատենագրության մեջ եկեղեցական ժողովների արձագանքներին է նվիրված մեր (Մ. - Ե. Shirinian, G. Muradian. The Armenian Collection of the Ecclesiastical Canons – Христианский Восток, N 1(7), СПб. – М., 1999, с. 124 – 154) հոդվածը: Առանձին խնդիրներ են արծարծված (որոնք մասնավորապես վերաբերում են հունարեն սկզբնագրում և Հայերեն թարգմանության մեջ նախատեսված պատիժների տարբեր տեսակներին) 1999 թ. հունիսին Օչականում տեղի ունեցած «Աստուածաշնչական Հայաստան» գիտաժողովում մեր կարդացած գեկուցման մեջ: Մ. - Է. Շիրինյան, Գ. Մուրադյան. Հայկական «Կանոնագիրք» հունարենից թարգմանված եկեղեցական կանոնները (գիտաժողովի նյութերը հրատարակության ընթացքում են):

² Մի քանի ձեռագրի բաղադրատույնի վրա է հիմնված Պիտրայի հրատարակությունը՝ J. P. Pitra. Juris ecclesiastici Graecorum historia et monumenta, 2 vol., Roma 1864, 1868. Լաուխերտը (F. Lauchert. Die kanones der altkirchlichen Concilien. Leipzig, 1896) բերում է միայն նախորդ հրատարակությունների կարևորագույն տարրերը: Քննական չէ նաև Յոաննուի նոր հրատարակությունը՝ Discipline generale antique, t. I, Les canons des concils oecumeniques, Roma, 1962; t. II, Les canons des Synodes Particuliers, Roma, 1962; t. III. Les canons des Peres Grecs, Roma, 1963: Որոշ ձեռագրերի համեմատություն է պարունակում միայն Հայերի կանոններն ընդգրկող 2-րդ Հատորը: Քննական հրատարակության է արժանացել Հովհաննես Սքորաստիկոսի VI դարի կեսերին կազմած «Հիսուն տիտղոսների ժողովածուն», որտեղ առաջին չորս տիեզերական ժողովների, ինչպես նաև առաքելական ու Բարսեղի կանոնները ներկայացված են համակարգված ձևով՝ Iohannis Scholastici Synagoga L Titulorum. Ed. VI. Benesevic. T. I, Munchen 1937.

Հանդես եկող կանոնները): Թարգմանականներից «Առաքելական կանոնները» սկզբնազիրն ասորերեն է, մնացածներինը՝ հունարեն: Դրանք են՝ «Երկրորդ առաքելական կանոնները», առաջին երեք տիեզերական և վեց տեղական արևելյան ժողովների ընդունած կանոնները (հայկական կանոնագրքում վերջիններս կազմում են յոթ կանոնախումբ: այս մասին կխոսենք ստորև), եկեղեցու հայրերի՝ Բարսեղ Կեսարացու և Տիմոթեոս Աղեքսանդրացու (հայկական տարբերակը վերագրված է Աթանաս Աղեքսանդրացուն) հեղինակած կանոնները: Քսանչորսերորդ՝ եզրափակիչ կանոնախումբը պատկանում է Օձնեցու գրչին³:

X դարում և ավելի ուշ ժողովածուն ընդլայնվել է. իր վերջնական տեսքով այն ընդգրկել է հիսունյոթ կանոնախումբ, և ձեռագրերում ներկայացված են երկու հիմնական խմբագրություն. Ա խմբի ձեռագրերում հետագա հավելումները հաջորդում են Օձնեցու ժողովածուն կազմող կանոնախմբերին, իսկ Բ խմբում՝ ներմուծված են դրանց միջև⁴:

բ. Բազում ձեռագրերում տարբեր ընդգրկումներով և խմբագրական տարբերակներով Հանդես եկող նյութի մանրակրկիտ և ճշգրիտ ուսումնասիրության վրա հիմնված «Կանոնագիրք հայոց» երկհատոր քննական հրատարակության մեջ Վ. Հակոբյանը հաճախ դիմել է եկեղեցական կանոնների հունական ժողովածուներին, մատնանշել հայերեն այս կամ այն կանոնախմբի հունարեն սկզբնազիրը, ցույց տվել առանձին կանոնների իմաստային շեղումներն իրենց նախորինականներից⁵: Կողմնորոշիչ լինելով հանդերձ, այգ բաղդատության արգյունքները պետք է նախնական համարել, քանի որ դրանք հնարավորություն են ընձեռում միայն ընդհանուր պատկերացում կազմելու հունարեն և հայերեն կանոնների փոխհարաբերությունների մասին⁶:

Հայերեն կանոնների բաղդատությունը նախորինականների հետ թույլ է տվել բացահայտել հետևյալը.

1) Հունարենից թարգմանված կանոնախմբերը տարբեր թարգմանական շերտեր են ներկայացնում և ունեն տարբեր թարգմանչական մոտեցում («ոսկեդարյան», «նախահունարան» և «հունարան» թարգմանություններ): Ամենավաղ շերտն են կազմում Կորյունի մոտ («է» գլխում՝ «Եփեսոսականների» հետ) հանդես եկող և Շահապիվանի ժողովի (447/8 թ.՝ ըստ Ս. Արևշատյանի⁷ կամ 444 թ.՝ ըստ Ն. Ակինյանի⁸) առաջաբանում հի-

3 Կանոնագիրք հայոց, աշխատասիրության վ. Հակոբյանի. հ. Ա, Երևան, 1964:

4 Կանոնագիրք հայոց, աշխատասիրության վ. Հակոբյանի. հ. Բ, Երևան, 1971:

5 Հմմտ. Ա հատորում համապատասխան կանոնների ընդարձակ ծանոթագրությունները:

6 Հարկ ենք համարում նշել, որ ստուգության և մանրակրկիտության աչքի ընկնող Վ. Հակոբյանի աշխատանքն ավարտուն չէ այն մասերում, որտեղ օգտագործված է հունարեն սկզբնազրյուրը: Դա, թերևս, բացատրվում է այն փաստով, որ հայերեն թարգմանության բաղդատությունը բնագրի հետ հեղինակը խնդրել էր կատարել Հ. Բարթիկյանին և հետո պարզապես զուգահեռաբար հունարեն կանոնները գետեղել ծանոթագրություններում, առանց օգտագործելու այդ համեմատության տվյալները: Օրինակ՝ քննական տեքստի համար յավապույն ընթերցումն ընարելիս նա առաջնորդվում է միայն հայերենի տրամաբանությունը անտեսելով հունարեն բնագրի ընձեռած հնարավորությունները (որոնք երբեմն օգնում են ճիշտ հասկանալ և անգամ ուղղել տեքստը):

7 С. А р е в ш а т я н. Шааппаискии капоны – дрснейшншн намятншк армяиского права. – ИФЖ, 1959, N 2-3, с 334.

8 Ն. Ա կ ի ն յ ա ն. Շահապիվանի ժողովի կանոնները. Վիեննա, 1953, էջ 18:

շատակվող «Նիկիական»⁹ կանոնները: Դրանք բաղկացած են Նիկիայի, Անկյուրայի, Կեսարիայի¹⁰, Նեոկեսարիայի, Գանգրայի, Անտիոքի և Լաոդիկեի ժողովների կանոնախմբերից, համառոտված տարբերակը՝ «Երկրորդ նիկիական» կանոններ խորագրով, ներկայացված է կանոնագրքի X գրքի խմբագրության մեջ¹¹: Այդ փաստը հաստատվում է նաև լեզվական գործոնով. թարգմանությունն իմաստային առումով ճշգրիտ է¹², իսկ լեզվի առումով՝ որոշակիորեն ազատ¹³, հունարենություններից գերծ, ինչը բնորոշ էր ամենավաղ՝ «ոսկեդարյան» թարգմանություններին:

«Տեղական» ժողովներից միայն Սարգիսի կանոնախումբը չի մտել «Նիկիական» կանոնների շարքը. ինչպես իրավացիորեն փաստել է Հ. Ոսկյանը, այդ կանոնախումբը, հավանաբար, թարգմանվել է հունարեն դպրոցի ներկայացուցիչներից մեկի ձեռքով¹⁴:

9 Կանոնագիրք հայոց, հ. Ա, էջ 424: «Նիկիական» կանոններն այստեղ հիշատակվում են ասորերենից թարգմանված «Առաքելականների» հետ. վերջիններիս նվիրված մի առանձին ուսումնասիրություն կա՝ Յ. Տաշեան. Վարդապետությունն առաքելոց. Վիեննա, 1896:

10 Ինչպես վերը նշվեց, հայկական կանոնագրքում տեղական արևելյան ժողովները կազմում են յոթ կանոնախումբ. «Կեսարիայի ժողով» հունական ժողովածուներում չկա, և որևէ աղբյուր այն չի հիշատակում. իրականում հայկական այդ կանոնախմբի տասր կանոններից վեցը համապատասխանում են Անկյուրայի հունարեն վերջին կանոններին (Ա - XX, Գ - XXI, Դ - XXII, Ե - XXIII, Է - XXIV, Թ - XXV): Ժամանակին Ժ. Լեբոնը, հաշվի առնելով նաև լատիներեն և ասորերեն ժողովածուներում Անկյուրայի և Նեոկեսարիայի միջև կայացած Կեսարիայի ժողովի հիշատակությունը, եկել է այն եզրահանգման, որ այդպիսի ժողով պետք է որ տեղի ունեցած լիներ, որպես Անկյուրայի ժողովի շարունակություն (J. Lebon. Sur un concile de Césaire. - *Le Museon*, t. LI. Louvain 1938, p. 89-139): Սակայն բոլորովին վերջերս Հ. Կառլոֆոլդը, զարգացնելով Է. Շվարցի այն սրամիտ ենթադրությունը (Լեբոնի կողմից չնկատված), որ լատինական և ասորական ժողովածուներում Կեսարիայի ժողովի հիշատակումը ծագում է գրանց հունարեն հնագույն և չպահպանված նախորինակում «Նեոկեսարիա» անվան աղավաղված ձևից (E. Schwartz. Die Kanonensammlungen der Alten Reichskirche. - *Zeitschrift der Savigny-Stiftung für Rechtsgeschichte*. Weimar, 1936, S. 16-17), առաջարկել է հայկական ժողովածուի մեջ այդ կանոնախմբի առկայությունը բացատրել հետևյալ կերպ. Հայ թարգմանիչը գարմացել է Նեոկեսարիայից առաջ իր հունարեն նախորինակում (որն, ի դեպ, նույն հնագույն չպահպանված տարբերակը պիտի լիներ) գտնելով Կեսարիայի հիշատակում, և «վերականգնել է» գոյություն չունեցող կանոնախումբը մի քանի կանոն առանձնացնելով Անկյուրայի կանոններից (H. K a u f m a n n. Die Rechtssammlung des Gabriel von Basra und ihr Verhältnis zu den anderen juristischen Sammelwerken der Nestorianer. - *Münchener Universitätschriften. Juristische Fakultät. Abhandlungen zur Rechtswissenschaftlichen Grundlagenforschung*. Berlin, 1973, S. 14-15):

11 Ն. Ա կ ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 27, 35-57: Կանոնագիրք հայոց, հ. Բ, էջ LVII, բնագիրը՝ նույն տեղում, էջ 73-90:

12 Հունարեն բնագրից շեղումները բացատրելի են մի շարք կանոնախմբերի, հատկապես Նիկիայի, Անկյուրայի, «Կեսարիայի» և Նեոկեսարիայի կանոնների խմբագրմամբ. մնացած՝ Գանգրայի, Անտիոքի և Լաոդիկեի կանոնախմբերը համեմատաբար քիչ են խմբագրվել և հնարավորություն են ունենում դատելու թարգմանչական մեթոդի մասին:

13 Ազատ թարգմանություն արտահայտությունն են, օրինակ, երկու բառով մեկ բառի թարգմանության («հենդիադիս») դեպքերը (Լաուդ. Բ. 229.6 «ոյք մեղան և յանցեան» - *Lauchert*, S. 72.11 ἐξαρπτανοντας. գոյականաբար կիրառված դերբայի դիմաց հարաբերական դերանվան հանդես գալը նույնպես «ոչ բառացի» թարգմանության արդյունք է):

14 Հ. Ոսկյան. Սարգիսի ժողովի հայերեն կանոնները. Վիեննա, 1945, էջ 115, տե՛ս նաև Կանոնագիրք հայոց, հ. Բ, էջ LVII. մեր արձանագրած հունարենություններից նշե՛նք՝ նախածանցավոր «արտաբերմ» կազմությունը (Սարգ. Դ, էջ 255,7. ԻԱ, էջ 271.8 -

Այսպես կոչված «նախահունարան թարգմանություն» տերմինով¹⁵ կարելի է բնորոշել «Երկրորդ առաքելական» (Կղեմայ), Կոստանդնուպոլսի ու Եփեսոսի տիեզերական ժողովների կանոնները և Աթանաս Աղեքսանդրացուն վերագրված ութսունութ կանոններից առաջին տասնչորսը (որոնց սկզբնագիրն իրականում պատկանում է Տիմոթեոս Աղեքսանդրացու գրչին¹⁶), այլ «նախահունարան» թարգմանությունների նման, որոնք ժամանակային առումով հաջորդել են ոսկեդարյաններին և նախորդել հունարաններին: Դրանք բավական ճշգրիտ համապատասխանում են հունարեն նախօրինականներին՝ հունարանությունների որոշակի տարրերի չափավոր կիրառությամբ¹⁷:

Ինչ վերաբերում է Բարսեղ Կեսարացու կանոնախմբին, ապա նրանում ընդգրկված հիսունմեկ կանոնները (հունարեն ինսուններկուսի դիմաց¹⁸) այն աստիճան համառոտված և փոփոխված են, որ դժվար է որևէ պատկերացում կազմել թարգմանչական մեթոդի մասին: Սակայն միայն մեկ ձեռագրում պահպանված «Բարսեղի եպիսկոպոսի Դեոդորայ ևրիցու Անտիքու» նամակը¹⁹ լիովին համապատասխանում է Բարսեղի հունարեն 87-րդ կանոնին. հայերեն ՕԱ կանոնը նրա խիստ համառոտված և մասամբ աղավաղված տարբերակն է, ինչը ստիպում է ենթադրել, որ թերևս մյուս կանոններն էլ նախապես թարգմանվել են ամբողջությամբ և հետագայում համառոտվել (սակայն այն չի օգնում պարզելու քառասունմեկ չթարգմանված կանոնների խնդիրը)²⁰:

εκφερω, Lauchert. S. 53. 34, 61. 8), «բանակ» իմաստային պատճենումը՝ «արքունիք» իմաստով (Սարգ. Ի, էջ 259.2 - στρατόπεδον «բանակ», ուչ բնադրերում՝ «արքունիք». Lauchert, S. 57.9), accusativus cum infinitivo (հայցականն անորոշ դերբայով) դարձվածը՝ «գ... խորամանկագործութիւն, եւ արուեստս տանջելիս կարծեմ լինել» (Սարգ. Բ, 254.1 - τας πα- διουργίας, και... τεχνας κολαστεας ειναι νομιζω. Lauchert, S. 52.18). մեխանիկական, ոչ իմաստային թարգմանության արգյունք է նաև «տանջելիս» բառը. κολάζω ունի «զսպել» և «պատժել» իմաստները, հունարանություն է նաև նրա ձևը (հուն. - τεος-ով հարկադրական նշանակություն ունեցող բայածականների՝ -լի-ով ապառնի դերբայով թարգմանության բազմաթիվ դեպքեր հանդիպում են հունարան թարգմանություններում):

15 Մենք օգտագործում ենք այն հետևելով Գ. Լաֆոնտենին և Բ. Կուլիին (G. Lafontaine, B. Coulie. La Version armenienne des Discours de Gregoire de Naziance. Tradition manuscrite et histoire du texte (CSCO, Vol. 446), Louvaine, 1983, p. 137): նախահունարան թարգմանությունների խմբի մեջ կարելի է գիտել Գրիգոր Նազիանզացու ճառերի, Բարսեղ Կեսարացու գրվածքների մեծ մասի, Աղեքսանդր Մակեդոնացու «Վարքի» և մի շարք այլ բնագրերի հայերեն թարգմանությունները:

16 Sb'u Discipline generale antique (IV-IX s.), par P.-P. Joannou, t. II. Les canons des Peres Grecs, Roma, 1963, p. 240-249.

17 Կոստանդնուպոլսի և Եփեսոսի կանոնախմբերը մեր կարծիքով պատկանում են միևնույն թարգմանչի գրչին:

18 Discipline generale antique, t. II., p. 92-187: նշված հիսունմեկ կանոններից տասնմեկը (Խ-Մ) առնչություն չունեն հունարեն կանոնների հետ, այլ այստեղ են թափանցել Բարսեղի «Հարցողաց գրքից» (տե՛ս G. Uluhogian. Basilio di Cesarea. Libro delle Domande (CSCO, vol. 536, 537; Scriptores Armeniaci, t. 19,20), Lovanii, 1993. p. 301-302), որն, ըստ Հրատարակչի, թարգմանվել է V-VI դարերի սահմանազրիսին (նույն տեղում, p. IX):

19 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 659, էջ 198ա-204, նաև Կանոնադիրք Հայոց, հ. Ա, էջ 620-621:

20 Լեզվական առումով նշված նամակն ավելի մոտ է վաղադույն շերտին (Հենդիադիս՝ «չըջեալ փոխեցաւ» էջ 621 - μεταβαίνει 167.1-2, նախածանցավոր բառի նկարագրական թարգմանություն՝ «առ միմեանս բնակութիւն» էջ 621 - συνικησις 164.11, acc. cum

2) Հայկական ամենավաղ կանոնական ժողովածուն՝ 430-ականների վերջին թարգմանված «Նիկիական կանոնները», որը հասել է մեզ V դարի վերջին կատարված խմբագրությունում (գրանց դեռևս չխմբագրված տարբերակը), ամենայն հավանականությամբ սերում է հունական նախաքաղկեդոնյան Անտիոքում շրջանառություն մեջ եղած ժողովածուից, որի մասին պատկերացում են տալիս հնադույն ասորերեն և լատիներեն («Խսիդորյան») թարգմանությունները²¹:

Այն, որ մեզ հասած «Նիկիական» կանոնները խմբագրություն են և ոչ թե թարգմանություն, երևում է առկա տեքստի բավականաչափ փոփոխված լինելուց, որը շատ տեղերում տարբերվում է հունարենից, ունի հավելումներ և կրճատումներ²²: Այդ խմբագրության թվագրումը պայմանավորված է այն փաստով, որ արդեն 606 թ. Վրթանես Քերթոզը մեջբերում է Գանգրայի XX և XXI կանոնները ներկա վիճակով²³:

«Նիկիական» կանոնների թարգմանության համառոտված տարբերակ է համարվում «Երկրորդ նիկիական կանոններ» խորագրով կանոնախումբը, որը ներկայացված է կանոնագրքի X դարի խմբագրության մեջ²⁴: Զարմանալին այն է, որ «Երկրորդ նիկիական կանոնները» մի շարք ընդհանրություններ են ցուցաբերում հունարեն նախորինակի հետ, մինչդեռ բուն «Նիկիական կանոնները», խմբագրված լինելու հետևանքով, շեղվում են նրանից: Դա առաջին հերթին վերաբերում է կանոնների կազմին. այն դեպքերում, երբ խմբագրման ընթացքում որոշ կանոններ զանց են առնվել (Նիկ. XVI, Լառոզ. LVII) կամ նոր կանոններ են ավելացվել (Նիկ. ԺԶ, Կես. Բ, Զ, Թ, Ժ, Նեոկ. Ը, Թ, Ժ, ԺԱ, ԺԲ, Գանգր. Ի, ԻԱ, ԻԳ, ԻԴ), «Երկրորդ նիկիականների» կազմը համապատասխանում է հունարեն սկզբնագրին: Բացի այդ, «Երկրորդ նիկիականների» տեքստը երբեմն բառացի համընկնում է հունարենին²⁵, ի տարբերություն բուն կանոնների տեքստի:

Նշված կետերը հիմք են հանդիսանում ենթադրելու, որ «Երկրորդ նիկիականները» գրվել են «Նիկիական կանոնների» խմբագրումից առաջ:

inl. դարձվածի նկարագրական թարգմանություն՝ «ոչ պահպանության պէտք և աւրէնս-դրին» էջ 621 - μηδε τῆς... φυλακῆς προσδεηθῆναι τον νομοθετην 165.8-9), սակայն ընդգրկում է նաև մի քանի հունաբանություն՝ «վերագիր» էջ 620 - ἐπιγραφή 160.21-22, նույնիսկ «բացարձակ սեռականի» (genetivus absolutus) պատճենում «ի բաց բարձելոյ պատճառին» էջ 621 - ἀπορημενῆς... τῆς αιτίας 164.9:

21 Հմմտ. Schwartz. Op. cit., S. 3-11. Ինչպես և Հայկական կանոնագիրքը, ասորական ժողովածուն ընդգրկում է նաև Կոնստանտինոս կայսեր նամակը, նիկիական հավատո հանդանակը և Նիկիայի ժողովին մասնակցած երկու հարյուր քսան եպիսկոպոսների ցանկը. վերջինիս մանրամասն վերլուծությունը տե՛ս H. Kaufhold. Griechisch-syrische Vaterlisten der frühen griechischen Synoden. - Oriens Christianus. Bd. 77, 1993, SS. 7-22, 57-96.

22 Խմբագրվել էին ոչ միայն «Նիկիական» կանոնները, այլև «Առաքելական կանոնները» և Շահապիվանի ժողովի կանոնները. դրանք կազմում էին V դարի ժողովածուն:

23 Գիրք թղթոց, Էրկրորդ հրատարակություն, Երուսաղեմ, 1994, էջ 264, տե՛ս նաև Ն. Ա կ ի ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 34:

24 Ն. Ա կ ի ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 27, 35-57, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ LVIII, բնագիրը՝ նույն տեղում, էջ 73-90:

25 Նիկիայի կանոնները հղվում են ըստ Յոաննուի վերոհիշյալ հրատարակության (հ. 1), իսկ տեղական ժողովներին՝ ըստ Լաուսիերտի (տե՛ս ծան. 2):

Այսպիսով «Նիկիական կանոնների» խմբագրությունը և «Երկրորդ նիկիականները» պարզապես նախնական, չպահպանված թարգմանություններով անկախ տարբերակ են:

3) Հունարեն սկզբնագրի հիման վրա Հայերեն թարգմանությունը ընթերցումները ճշգրտելու հետ կապված նկատառումները բաժանել ենք երեք խմբի.

ա) Վերոհիշյալ «Երկրորդ նիկիական կանոնները», որոնք «Նիկիական կանոնների» (այն է՝ Նիկիայի, Անկյուրայի, «Կեսարիայի», Նեոկեսարիայի, Գանգրայի, Անտիոքի և Լաոդիկեի ժողովների) համառոտված տարբերակն են, մի շարք ընդհանրություններ են ցուցաբերում հունարեն նախորինակի հետ, մինչդեռ բուն «Նիկիական կանոնները», խմբագրված լինելու հետևանքով, շեղվում են նրանից:

Ներկայացնենք նկատված ընդհանրությունների և տարբերությունների ցանկը.

- Բ Նիկ. Բ. 73.6. նորատունկս = Nic. II. 25.5. νεόφυτον²⁶ // Նիկ. Բ. 117.11 որք յարտաքնոցն յայլ աղանդացն կամիցին հաւատալ,

- Բ Նիկ. Գ. 73.7. ի ներքս ածական ունել = Nic. III. 26.1-2. συνείσακτον ἔχειν // Նիկ. Գ չիք,

- Բ Նիկ. Զ. 74.3. զվաղնջուցն = Nic. VI.28.15. τὰ ἀρχαῖα // Նիկ. Զ. 120.14. նախնեաց,

- Բ Նիկ. ԺԲ. 75.3. աղաւթից հաղորդել = Nic. XII. 34.12. των εὐχῶν κοινωησουσι // Նիկ. ԺԲ. 125.10. ի խորհուրդն հաւասարել,

- Բ Նիկ. ԺԵ. 75.9. փոխել = Nic. XV. 36.16. μεταβαίνειν // Նիկ. ԺԵ. 127.9. յափշտակել,

- Բ Նիկ. ԺԸ. 75.15. ոչ նստել ընդ երիցու = Nic. XVIII. 39.24-40.1. μηδὲ καθῆσθαι ἐν μέσῳ των πρεσβυτέρων // Նիկ. ԺԸ. 129.8-9. ընդ երիցունս խառն աւրէնս առնուլ²⁷,

- Բ Նիկ. ԻԳ. 77.2. ի րաց տալ = Anc. XI. 32.18. ἀποδίδοσθαι // Անկ. ԺԲ. 162.12. տայցեն,

- Բ Նիկ. ԻԳ. 77.2. առաջին խաւսեցելոյն²⁸ = Anc. XI. 32.18. προμνηστευσαμένοις // Անկ. ԺԲ. 163.1. որում խաւսեալն էր,

- Բ Նիկ. ԼԲ. 78.15. ապականեսցի = Anc. XXV.34.24. προσεφθάρη // Կես. Թ. 173.10. ննջեսցէ,

- Բ Նիկ. ԼԲ. 79.1. գիտակալիցքն = Anc. XXV.34.26. συνειδότες // Կես. Թ. 174.1. գիտակ,

- Բ Նիկ. ԽԵ. 81.1-2. Սարկաւագունք պարտ է լինել յեկեղեցւոյ է, ըստ առաքելական կանոնին որ ի Գործս առաքելոցն, հմմտ.՝ Neoc. XV. 36.27-29. Διακονοι ἐπὶ τὰ ὀφείλουσιν εἶναι κατὰ τὸν κανόνα κἂν πάνυ μεγάλη εἴη ἡ πόλις· πεισθήσῃ δὲ ἀπὸ τῆς βίβλου τῶν πράξεων. «Կանոնի համաձայն սարկավագները պիտի լինեն յոթ, նույնիսկ եթե քաղաքը

²⁶ Հունարեն բառը եզակի թվով է:

²⁷ Նախորինակի հոգնակի թիվն արտացոլված է խմբադրական տարբերակում («ընդ երիցունս»), մինչդեռ համառոտվածում եզակի է, չնայած տարբերություններում առկա են «երիցունս» և «երիցունս» տարբերակները:

²⁸ Եզակի՝ հուն. հոգնակիի դիմաց, սակայն կա և «խաւսեցելոցն» տարբերակումը:

մեծ է. գրանում կարելի է համոզվել «Գործք [առաքելոց]» գրքից» // Նեոկ. Ի. 187.9-11. Եւ սարկաւագունս ըստ պիտոյիցն արժան է առնել, որչափ տեղիքն են եւ պէտքն խնդրեսցեն, եւ ոչ մի աւելիս ինչ, զի մի՛ ցոփութիւն լինիցի:

- Բ Նիկ. ԽԱ. 80.3-7. Եթէ կին ուրուք շնացաւ մինչդեռ աշխարհական իցէ եւ յայտնի գտցի ընդ յանցանաւք, զայսպիսեացս զարս ոչ է արժան ի քահանայութիւն մատուցանել. իսկ եթէ յետ ձեռնադրութեանն գտցի ի շնութեան, կինն արձակել արժան է, ապա եթէ ունիցի ի կնութեան՝ ոչ կարէ լինել քահանայ: Հմմտ.՝ Neoc. VIII. 35-30-36.3. Γυνή τινος μοιχευθείσα λαικου οντος εαν ελεγχθη φανερωσ, ο τοιουτος εις υπηρεσιαν ελθειν ου δυναται. εαν δε και μετα την χειροτουιαν μοιχευθη, οφειλει απολυσαι αυτην, εαν δε συζη, ου δυναται εχεσθαι της εγχειρισθείσης αυτω υπηρεσιას. // Նեոկ. ԺԳ. 184.12-185.4. Վասն որ պատրաստեալ են ի քահանայութիւն եւ կանայսն ունիցին՝ թէ մինչ չեւ ի քահանայութիւն մերձեցեալ իցէ եւ կինն շնայցէ, արձակեսցի կինն եւ առնն չիշխէ լինել. եւ այրն ի քահանայութիւն մատիցէ. ապա եթէ կամք իցեն նմա կալ ընդ կնոջն, քահանայ ոչ եւս կարէ լինել, զի ոչ ընդունի զնա եկեղեցի եւ կանոն:

- Բ Նիկ. ԾԳ. 82.3. ի կապեղայս = Laod. XXIV. 75.6. εις καπηλειον // Լաւոդ. ԻԴ. 234.14. առ կրպակս,

- Բ Նիկ. ԾԶ. 82.8. մասունս = Laod. XXVII. 75.12. մերի // Լաւոդ. ԻԷ. 235.5. ընձեռես,

- Բ Նիկ. ՀԹ. 85.9-10. փոխանորդ = Ant. XXIII. 49.12. διαδοχος // Անկ. ԻԲ. 219.13 փոխանակ,

- Բ Նիկ. ԶԹ. 87.2. առաքել = Laod. XIV. 73.32. διαπέμπεσθαι // Լաւոդ. ԻԴ. 232.7. տալ,

- Բ Նիկ. ՂԷ. 88.1. սպասաւոր = Laod. XXII. 74.30. υπηρετης // Լաւոդ. ԻԳ. 234.11. սաղմոսողոգ,

- Բ Նիկ. ՂԹ. 88.5. Քառասներորդ = Laod. XLV.77.5. τεσσαρακοστη // Լաւոդ. ԽԲ. 238.7. աղուհաց,

- Բ Նիկ. ՃԵ. 89.1. Հինգշաբթի լուծանել = Laod. L.77.19. πέμπτην λυειν // Լաւոդ. ԽԷ. 239.3-4. Հինգշաբթի աւր բերան լուծանել,

- Բ Նիկ. ՃԸ. 89.7. տեսիլ = Laod. LVI. 77.29. θεωρίας // Լաւոդ. ԾԱ. 240.1-2. խաղս... կամ երդս,

- Բ Նիկ. ՃԺԱ. 89.13. տեսուչք շրջել, հմմտ.՝ Laod. LVII. 78.8. περιουδευτας // կանոնը չիք,

- Բ Նիկ. ՃԺԴ. 90.3. տգիտական = Laod. LIX. 78.14. ιδιωτικούς // Լաւոդ. ԾԵ. 240.12. յիմաստութենէ ուրուք եղեալ:

բ) «Երկրորդ առաքելական կանոնները» բավական ճշգրիտ թարգմանութիւն են հունարենից: Մատենադարանի N659²⁹ և 657 ձեռագրերում այդ կանոնախումբը ներկայացված է խմբագրված տեսքով (N657-ում կանոնների մի մասը բացակայում է): Հիմնական տեքստից շեղումների

²⁹ N659 այն ձեռագիրն է, որ պահպանել է Բարսեղի 37-րդ կանոնի ամբողջական թարգմանութիւնը:

թվում կան այնպիսիք, որոնք ավելի մոտ են հունարեն սկզբնազրին³⁰, այսինքն՝ խմբագրումը կատարվել է մի ավելի հին տարբերակից: Վ. Հակոբյանը համապատասխան ծանոթագրություններում զգալի թվով հատվածներ է բերել նշված ձեռագրերից, սակայն համեմատությունը լրիվ գարձնելու նպատակով դիմել ենք բուն ձեռագրերին.

- Առաք. Գ. 75.8-9. արտաքոյ քան զհրամայեալսն տեառն // *Ap.* III. 1.4-5. παρα την του κυριου διαταξιν = արտաքոյ տեառն հրամանին (ձձ. 659, 657),

- Առաք. Գ. 75.11 արտաքոյ քան զհրամայեալսն // *Ap.* III. 1.7. παρα την διαταξιν = արտաքոյ հրամանին (ձձ. 659, 657),

- Առաք. Ը. չիք // *Ap.* IX. 2.2. η̄ εκ του καταλογου του ιερατικου - այլ ոք ի քահանայական կարգէն (ձ. 657)

- Առաք. է. 76.9. զչարչարանաց // *Ap.* VIII. 1.23. τοῡ πασχα, ζαμαտ. չարչարանաց գատկին (ձձ. 659, 657),

- Առաք. Ը. չիք // *Ap.* IX. 2.1. εῑ τις = եթէ ոք (ձձ. 659, 657),

- Առաք. Ը. 76.14. ժողովրդոց // *Ap.* IX. 2.5. τω̄ λαω̄ = ժողովրդոյն (ձ. 659),

- Առաք. ԺԱ. 77.8. լուծեալ // *Ap.* XII. 2.13. καθηρημενω̄ = ընդ լուծելոյ (ձ. 659),

- Առաք. ԺԱ. 77.8. քահանայ // *Ap.* XII. 2.13. κληρικος̄ = ժառանգաւոր (ձ. 659),

- Առաք. ԺԱ. չիք // *Ap.* XII. 2.14. καῑ αυτος̄ = եւ նա (ձձ. 659, 657),

- Առաք. ԺԲ. 77.10. ի ժառանգաւորաց // *Ap.* XIII. 2.15. κληρικος̄ = ժառանգաւոր (ձձ. 659, 657),

- Առաք. ԺԲ. չիք // *Ap.* XIII. 2.15. η̄ λαϊκος̄ = կամ ժողովրդական (ձձ. 659, 657),

- Առաք. ԺԲ. չիք // *Ap.* XIII. 2.15-16. η̄τοῑ αδεκτος̄ (v. l. δεκτος̄), ζαμαտ. եւ յետոյ ընկալեալ (ձձ. 659, 657),

- Առաք. ԺԲ. 77.10. երթիցէ // *Ap.* XIII. 2.16. απελθων̄ = եւ երթեալ (ձձ. 659, 657),

- Առաք. ԺԲ. 77.11. ընկալցին // *Ap.* XIII. 2.16. δεχθη̄ = ընկալեալ եղեւ (ձձ. 659, 657),

- Առաք. ԺԲ. 77.12. Թէսլէտ եւ էր ընդունելի // *Ap.* XIII. 2.18. εῑ δε̄ αφωρισμενος̄ εῑη, ζαμαտ. իսկ եթէ ընդ բանիւ որոշմամբ էր (ձձ. 659, 657),

- Առաք. ԺԳ. 78.3. շահել // *Ap.* XIV. 2.23. τῑ κερδος̄ = աւգտութիւն ինչ (ձձ. 659, 657),

- Առաք. ԺԳ. 78.4. եւ գայս // *Ap.* XIV. 2.24. τοῡτο̄ δε̄ = սակայն գայս (ձձ. 659, 657),

- Առաք. ԺԴ. 78.5. ով եւ իցէ ի ժառանգաւորաց // *Ap.* XV. 2.26. ο̄λως̄ τοῡ καταλογοῡ των̄ κληρικων̄ = բնաւ ի քահանայական կարգէ (ձձ. 659, 657),

30 Հղում է ըստ Հաուսերտի հրատարակության:

- Առաք. ԺԴ. 78.9. թէ բազում անգամ յորգորեալ իւրոյ եպիսկոպոսին // *Ap. XV. 2.30-31.* εἰ προσκαλουμένου αὐτόν τοῦ ἐπισκόπου αὐτοῦ ἐπανελθεῖν = կոչեցեալ զնա իւրոյ եպիսկոպոսին դառնալ յիւր տեղի (ձձ. 659, 657),
- Առաք. ԺԴ. 78.12. նորա // *Ap. XVI. 3.2.* αὐτῶν = նոցա (ձձ. 659, 657),
- Առաք. ԺԴ. 78.13. զնա // *Ap. XVI. 3.3.* αὐτοὺς = զնոսա (ձձ. 659, 657),
- Առաք. ԻԴ. 80.9. որք... անցանեն // *Ap. XXVII. 4.3.* τῶν... προσελθόντων = որք եկեալ են (ձ. 659),
- Առաք. ԻԵ. 81.2. զկոռուղս // *Ap. XXVIII. 4.6.* ἀδικήσαντας, ζῆλον. αὐθιγῶν (ձ. 659),
- Առաք. ԻԶ. 81.8. յանցանաց // *Ap. XXIX. 4.12.* ἐγκλήμασι = բարեբանաց (ձ. 659),
- Առաք. ԻԷ. 82.1. ժողովաւորութեան // *Ap. XXX. 4.16.* ἀξίας = պատուոյ (ձ. 659),
- Առաք. ԻԹ. 82.10. բարեբանութիւն կամ արդարութիւն // *Ap. XXXII. 4.25.* ἐν εὐσεβείᾳ καὶ δικαιοσύνῃ = ի բարեբանութեան եւ արդարութեան (ձ. 659),
- Առաք. ԼԲ. 83.13. պարտ է // *Ap. XXXV. 5.12.* αὐτόν = զնա (ձ. 659),
- Առաք. ԼԳ. 84.6-7. քաղաք կամ գաւառք // *Ap. XXXVI. 5.20-21.* εἰς... πόλεις καὶ χώρας = ի քաղաքս եւ ի գաւառս (ձ. 659),
- Առաք. ԼԴ. 84.10. որք // *Ap. XXXVI. 5.19.* ζήρ = ձ. 659,
- Առաք. ԼԴ. 84.15. չիք // *Ap. XXXVII. 5.30-31.* ἀνυποτάκτου = անհնազանդ (ձ. 659),
- Առաք. ԼԶ. 85.5. անտի // *Ap. XXXIX. 6.7-8.* ἐξ αὐτῶν = յայնցանէ (ձ. 659),
- Առաք. ԼԶ. 85.7. աւցտել // *Ap. XXXIX. 6.10.* ἀπεμπολείτω = վաճառել (ձ. 659),
- Առաք. ԼԷ. 85.9. զի նմա հաւատացաւ // *Ap. XL. 6.13.* αὐτὸς γὰρ ἐστὶν ὁ πεπιστευμένος = քանզի նա է, որում հաւատացեալ է (ձ. 659),
- Առաք. ԼԸ. 85.14. իրաւքն // *Ap. XL. 6.18.* πραγμάτων = իրաց (ձ. 659),
- Առաք. ԼԸ. 86.2. Աստուծոյ // *Ap. XL. 6.20-21.* παρὰ θεῶν = առաջի Աստուծոյ (ձ. 659),
- Առաք. ԼԸ. 86.13. մի ինչ իրաւք // *Ap. XL. 7.2.* κατὰ μὴδένα τρόπον = ոչ միով աւրինակաւ (ձ. 659),
- Առաք. ԼԹ. 86.12. ինքեանք // *Ap. XLI. 6.33.* αὐτόν = ինքն (ձ. 659),
- Առաք. ԼԹ. 86.14. որք... պարագեալ են // *Ap. XLI. 7.4.* τοὺς ὑπηρητοῦντας = որք... պաշտաւնեայք են (ձ. 659),
- Առաք. ԽԳ. 87.9. թերահաւատից // *Ap. XLV. 7.16.* αἰρετικοῖς, ζῆλον. ἐν ἁρτί, αὐθιγῶν, αὐθιγῶν (ձ. 659),
- Առաք. ԽԶ. 88.11. որք // *Ap. LI. 8.17.* ζήρ = ձ. 659

- Առաք. Խէ. 88.15. որ ապաշխարէ // *Ap. LII. 8.21. μετανοουντι* – ապաշխարելոյ (ձ. 659),
 - Առաք. ԾԴ. 90.2. ոչ տացէ նմա գպէտսն // *Ap. LIX. 9.12. μη επιχορηγει τα δεοντα* = ոչ լցցէ զկարաւտուծիւնն (ձ. 659),
 - Առաք. ԾԷ. 90.10. կորասցի // *Ap. LXII. 9.22. ἀριθησεται* = ուրասցի (ձձ. 659, 657),
 - Առաք. ԿԲ. չիք // *Ap. LXVII. 10.10. ἀμνηστευτον* = անխաւս (ձձ. 659, 657),
 - Առաք. ԿԲ. 91.8-9. մի լիցի... արժան // *Ap. LXVII. 10.11. μη εξειναι* = մի լիցի... իշխանութիւն (ձձ. 659, 657),
 - Առաք. ԿԳ. 91.12. ունիցի // *Ap. LXVIII. 10.14. δέξεται* = ընկալցի (ձձ. 659, 657),
 - Առաք. Կէ. 93.3. անաւթով ոսկեղինաւ կամ արծաթեղինաւ սրբեցելով // *Ap. LXXIII. 11.3-4. σκευος χρυσοῦν και ἀργυρουں αγιασθεν, ζαμαտ. կամ թէ անաւթ ինչ ոսկեղէն կամ արծաթեղէն, որ բերաւ յեկեղեցին եւ սրբեցաւ* (ձ. 659),
 - Առաք. ԿԹ. 94.1. զթերահաւատ ոք // *Ap. LXXV. 11.17. αἰρετικόν, ζαμαտ. զհերետիկոս ոք, այսինքն զթերահաւատ* (ձ. 659),
 - Առաք. Հ. 94.7. մարդկային սիրոյ // *Ap. LXXVI. 11.20. παθει ανθρωπινω, ζαμαտ. մարդկային ախտի ցանկութեան* (ձ. 659),
 - Առաք. ՀԴ. 95.5. զոր չեն փորձեալ է // *Ap. LXXX. 12.6. τον μηδε προπειραν επιδειξαμενον* = որոյ փորձ ինչ չեւ է ցուցեալ (ձ. 659):
- Մի քանի օրինակ ենք արձանագրել, որոնցում բուն տեքստի և նշված ձեռագրերի միջև տարրնթերցումներից յուրաքանչյուրի համար համարժեք ենք գտել հունարեն բնագրի մեզ համար մատչելի ձեռագրային ընթերցումների թվում: Քանի դեռ առկա հունարեն ձեռագրերը համեմատված չեն հայերենի հետ, իրերի այդպիսի վիճակը զուտ պատահականություն համարելով հանդերձ, այդ օրինակներն առանձնացրել ենք.
- Առաք. Թ. 77.3. յեկեղեցի = *εις την εκκλησιαν*³¹ // *Ap. X. 2.7. չիք* = ձձ. 659, 657,
 - Առաք. ԺԹ. 79.11. ծնաւ = *Ap. XXI. 3.17. ε̅φ̅υ // εκ φυσσεως ε̅σ̅τι*³², *ζαμαտ. ի բնէ... ծնեալ եղեւ* (ձձ. 659, 657),
 - Առաք. ԿԱ. 91.6. մեռցի = *αποθανη*³³ // *Ap. LXV. 10.5 αποκτειναι* = սպանցէ (ձձ. 659, 657):
 - Առաք. ՀԱ. 94.12. իցէ յեպիսկոպոսութիւն = *η̅ εις επισκοπη̅ν*³⁴ // *իցէ եպիսկոպոսութեան* (ձ. 659) = *ε̅πισκοπη̅ς ε̅στιν*³⁵ // *Ap. LXXVII. 11.25. ε̅στιν, ε̅πισκοπος*:

31 *St'v Pitra*, vol. I, p. 15, v. 1 (Vatic. 3):

32 *Joannou*, t. 1, p. 17, 15:

33 *Joannou*, t. 1, p. 42.5, *Pitra*, vol. I, p. 28, v. 1 (Io. Antiochen. vulgatus):

34 *Pitra*, vol. I, p. 32, v. 1 (vatic. 1, 2):

35 *Joannou*, t. 1, p. 47.14; *Ioannis Scholastici Synagoga*, p. 49:

գ) Հունարենից թարգմանված կանոններում կան գեպքեր, երբ հունարենն օգնում է ճիշտ ընթերցումը ընտրելու կամ ուղղում մտցնելու հայերենի մեջ.

- Նեոկ. ԺԸ. 187.3. բաժանել // Neoc. XIII. 36.22. ποτηριον = բաժակ (մի շարք ձձ.՝ NN. 648,650, 651, 2964, 3562),

- Անտ. Գ. 208.7. գգիրս և զկարգս // Ant. III. 44.15. τους θεσμούς (զգգիրս պետք է ուղղել՝ *զգգիրս),

- Սարդ. Բ. 253.11. որպէս... կարծեալ // Sard. II. 52.6-7. ὡς... δοξαί = որպէս... կարծել (wbfghilopqrs),

- Սարդ. Ժ. 262.6. գոյ // Sard. X. 62.17. εἶναι = գոյ (MQSZ),

- Սարդ. Ժ. 263.3. կարճեսցի // Sard. 63.26. νομισθεῖν, պետք է ուղղել՝ *կարճեսցի,

- Սարդ. ԺԲ. 265.11. մի նա կարծեսցէ լինել առանց հաղորդութեան // Sard. XII. 66.11-12. μὴ χωρὶς συνελϋσεως αὐτὸν δοκεῖν εἶναι = ... կարճեսցի... (BCDEFGHWe),

- Սարդ. ԺԲ. 265.14. թիւրի բան նորա ոչ դիպելով անդ՝ ոչ ինչ վնասակար են // Sard. XII. 66.17-20. καὶ τὰ οἰκεία αὐτοῦ πράγματα παρὰ τὴν τοῦ αὐτοῦ ἀπουσίαν οὐδεμίαν ὑπομενεῖ ζημίαν, առաջարկում ենք ուղղել՝ *եւ թէ իւր բանք, նորա ոչ դիպելով անդ ոչ ինչ վնաս կրին,

- Սարդ. Ի. 272.5. դտցէ զնա ի պաղատն անդր երթալ // Sard. XX. 62.2-3. εὐρη αὐτὸν ἐπὶ τὸ στρατόπεδον ἀπιόντα - ... երթեալ... (մի շարք ձձ.),

- Սարդ. ԻԱ. 271.13. կամաց հաճոյ // Sard. XX. 61.18. ἢ τῷ θεῷ ἀρέσαι, ուղղում ենք՝ *կամ այ³⁶ հաճոյ,

- Սարդ. ԻԱ. 272.4. ուղղոյն // Sard. XX. 61.34. τὴν παρόδου = ուղղոյն (մի շարք ձձ.),

- Առաք. ԿԳ. 92.2. հնարէ // Ap. LXVIII. 10.18. δυνατόν, ուղղելի է՝ *հնար է,

- Առաք. ԿԴ. 92.6. ոք // Ap. LXIX. 10.20. չիք = beiglq,

- Առաք. ՀԱ. 94.11. եւ // Ap. LXXVII. 11.25. ἦ = կամ (մի խումբ ձձ.),

- Առաք. ՀԶ. 95.13. է այս գործ // Ap. LXXXII. 12.15. τὸ τοιοῦτο ἐργάζεται = այս գործէ < այս գործ է (մի խումբ ձձ.),

- Առաք. ՂԱ. 97.2. չիք // Ap. L. 8.4. εἶ τις = եթէ ոք (մի խումբ ձձ.),

- Առաք. ՂԱ. 97.2. յերիս մկրտութիւնս // Ap. L. 8.4-5 τρία βαπτίσματα = երիս մկրտութիւնս (մի խումբ ձձ.),

- Բրս. ԾԱ. 620. մեծ և ի վեր քան զբան հառ իւրաքանչիւր ումեք // Bas. LXXXVII. 162.21-22. μείζων ἔστι τοῦ λόγου ἢ παρ' ἑκάστω, ուղղում ենք՝ *մեծ եւ ի վեր քան զբան է առ իւրաքանչիւր ումեք,

- Բրս. ԾԱ. 620. եթէ երևեսցի ինձ (հետագայում ուղղված է ինչ - Վ. Հ.) // Bas. LXXXVII. 163.16. εἰάν τι φανῆ, ճիշտ տարբերակն է՝ ինչ,

- Բրս. ՄԱ. 620. եթէ ոչ այսպէս է // Bas. LXXXVII. 163.25. ἐπεὶ
 ΟΥΤΩ, ուղղում ենք՝ *եթէ այսպէս է:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Առաք., Ap. – «Երկրորդ առաքելական (Կղեմայ)» (Հայերեն և Հունարեն) կանոններ

Բ Նիկ. – «Երկրորդ Նիկիական» (Հայերեն) կանոններ

Նիկ., Nic. – Նիկիայի ժողովի (Հայերեն և Հունարեն) կանոններ

Անկ, Anc. – Անկյուրայի ժողովի (Հայերեն և Հունարեն) կանոններ

Կես. – «Կեսարիայի ժողովի» (Հայերեն) կանոններ

Նեոկ., Neoc. – Նեոկեսարիայի ժողովի (Հայերեն և Հունարեն) կանոններ

Լաուդ., Laod. – Լաուդիկի ժողովի (Հայերեն և Հունարեն) կանոններ

Անտ., Ant. – Անտիոքի ժողովի (Հայերեն և Հունարեն) կանոններ

Գանգր., Gangr. – Գանգրայի ժողովի (Հայերեն և Հունարեն) կանոններ

Սարդ., Sard. – Սարդիկի ժողովի (Հայերեն և Հունարեն) կանոններ

Բրս., Bas. – Բարսեղ Կեսարացու (Հայերեն և Հունարեն) կանոններ

АРМЯНСКИЕ ЦЕРКОВНЫЕ КАНОНЫ, ПЕРЕВЕДЕННЫЕ С ГРЕЧЕСКОГО. ТЕКСТОЛОГИЧЕСКИЕ НАБЛЮДЕНИЯ

МАНЭ-ЭРНА ШИРИНЯН, ГОАР МУРАДЯН

Резюме

Составленный в начале VIII в. католиком Ованом Однеци армянский канонический сборник содержит канонические группы, переведенные с греческого. Их сравнение с оригиналами позволило установить, что самый ранний слой переводов, "классических" по своему языку, содержит несколько групп, названных Корюном и в канонах Шаапиванского собора (444 или 447/8 г.) "Никейскими": каноны вселенского собора в Никее и каноны поместных соборов в Анкире, Неокесарии (между ними фигурируют каноны несуществующего "Кесарийского собора"), Антиохии, Гангры и Лаодикии. Второпостольские каноны (Климента), каноны вселенских соборов в Константинополе и Эфесе, каноны, приписанные Афанасию Александрийскому и каноны Василия Кесарийского переводились позже и отличаются более дословной передачей оригинала, характерной для "предгрекофильских переводов". А язык канонов собора в Сардике содержит грецизирующие элементы. Сопоставление перевода с оригиналом позволило выявить большой ряд совпадений перевода с теми или иными разночтениями текста греческих канонов, не имеющих критического издания. Учитывая и то, что армянский перевод соответствует самому раннему несохранившемуся греческому сборнику канонов, бытовавшему в Антиохии, о котором по сей день судили лишь по сирийской и латинской версиям, использование армянского перевода представляется абсолютно необходимым при будущем осуществлении такого издания. Подготовленная нами публикация монография (Institut für Europäische Rechtsgeschichte, Frankfurt-am-Main) с перечнем всех указанных соответствий предназначена служить вспомогательным

пособием при таком начинании. Сличение позволило выявить также не такой многочисленный ряд случаев, в которых греческий оригинал помогает выбрать правильное чтение армянского перевода (к сожалению, это не было проделано Вазгеном Акоюном при составлении им критического текста, во всех других отношениях отличающегося высокой степенью точности), а иногда и исправить испорченный текст. В указанном ряду выделяются две группы соответствий: чтения, подкрепленные греческими, в так называемых "Вторых Никейских канонах", сокращенной версии "Никейских канонов" (в то время как последние подверглись редактированию уже после сокращения, по всей вероятности в конце V в., и имеют значительные расхождения с оригиналом), а также аналогичные случаи сохранения оригинальных чтений в сильно отредактированной версии "Второапостольских канонов".

ARMENIAN ECCLESIASTICAL CANONS TRANSLATED FROM GREEK.
TEXTOLOGICAL NOTES

MANE-ERNA SHIRINYAN, GOHAR MURADYAN

S u m m a r y

The Armenian canonical collection compiled in the early 8th c. by Catholicos Hovhan Odznetsi contains canonical groups translated from Greek. Their comparison with the originals has revealed that the earliest layer includes several canonical groups, classical by their language, called "Nicaean" by Koriwn and in the canons of Shahapivan (444 or 447/8): the canons of the universal council in Nicaea and the canons of the local synods in Ancyra, Neocaesarea (between them there are the canons of the non-existent "synod of Caesarea"), Antioch, Gangra and Laodicaea. The "Second Apostolic Canons (by Clemens)," the canons of the councils in Constantinople and Ephesus, the canons ascribed to Athanasius of Alexandria and the canons of Basil of Caesarea were translated later and render the original more literally, which was peculiar to the "pre-hellenizing" translations. And the language of the canons of Sardica contains hellenizing elements. The comparison of the translation with the original has allowed us to indicate a large number of coincidences of the translation with this or that reading of the text of the Greek canons which have not undergone critical edition. Taking into consideration that the Armenian translation corresponds to the earliest non-extant Greek collection of canons, which had been in use in Antioch, and till nowadays has been known thanks to the Syriac and Latin versions, the use of the Armenian translation will be absolutely necessary for preparing such critical edition. Our monograph ready for publication (Institut für Europäische Rechtsgeschichte, Frankfurt-am-Main) containing the list of all the mentioned correspondences, is designed to serve as an auxiliary "supply" for such an undertaking. The collation made it possible to reveal also a less numerous series of cases when the Greek original helps to choose the correct reading of the Armenian translation (unfortunately, this was not done by Vazgen Hakobian when he was preparing the critical text, in all other respects notable for its extreme accuracy) and sometimes to correct the text. Among them there are two special groups: readings corroborated by the Greek text of the so-called "Second Nicaean Canons," the abridged version of the "Nicaean Canons" (while the latter underwent edition after the abridgement had been made, probably in the late 5th c., and demonstrate considerable deviations from the original), and similar cases of preservation of original readings in the strongly changed recension of the "Second Apostolic Canons".